

ԷԶԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

УДК 001.4+001.5

«ՔԻՄԻԱ» ՏՆՐՄԻՆԸ ՀԱՅ ՄԱՏՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Չորրորդ դարի հույն գիտնական, հայտնի ալքիմիկոս Զոսիմա Պանոսյուրիտանացին առաջինն է գիտական շրջանառության մեջ դրել քիմիա բառը [1,2]:

2. Աճառյանի [3] կարծիքով քիմիա բառը քիմիա ձևով մեզանում առաջին անգամ կիրառել է 12-րդ դարի պատմիչ Սամուել Անեցին [4]. «...Որ մինն ուսուցանելը զարուեստ քիմիային և միան զտլամաթին՝ և զսուտ հրաշից կախարդութեան և նոքոք հարստացան և աճեցին»։ Այստեղ մեզ հետաքրքրող երկու արտահայտություն կա։ Նախ, որ քիմիան արհեստ է և ոչ գիտություն։ Հիրավի, քիմիան արհեստ-գիտություն էր ընդհուպ մինչև 18-րդ դարի վերջերը։ Բնագրում տլամաթը արաբերեն բառ է, հայերեն թարգմանություն՝ կախարդական բաներ, հուռութք [5]։ Ուրեմն, ըստ Սամուել Անեցու, քիմիա, կախարդություն և խարդախություն սովորեցնողները հարստանում և բարդավաճում են։ Այո, քիմիայի պատմությունը վկայում է, որ ալքիմիկոսներին ոմանք դարեր շարունակ օգտվելով հասարակ մարդկանց՝ գիտության շատ ու շատ հարցերում անտեղյակությունից, զանազան արտաքին էժան պատրանքներ ստեղծելով, խաբում էին նրանց և կորզելով մեծ գումարներ՝ հարստանում [6]:

1702 թվականին Ամստերդամում լույս է տեսել Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների «Բնաբանություն իմաստասիրական կամ տարերաբանություն» աշխատությունը, որը բնագիտական տպագիր առաջին գիրքն է մեզանում։ Ուշագրավ է գրքի յոթերորդ պրակը, ուր, մեր կարծիքով, հայերեն տպագիր գրականության մեջ առաջին անգամ հանդիպում ենք քիմիա բառը. «Տամուկ շունչն ի Քիմիայից ասի փայլածու. ծառայ փախստական. ջուր. կապ. ջրային շունչ՝ և սնդիկ բնութեան»։

19-րդ դարի հայերեն տպագիր գրականության մեջ ավելի հաճախակի ենք հանդիպում քիմիա բառին։ Դարասկզբին՝ 1813-ին Վենետիկում տպագրված Մխիթարյան միաբանության անդամ Իգնատիոս Փափաղյանի «Մանրանկարք, որ է միևնաթուռա» գրքի՝ ներկերի պատրաստման ձևերին նվիրված բաժնում հանդիպել ենք քիմիա և քիմիական բառերին։

1815-ին Վենետիկում լույս է տեսել դարձյալ Մխիթարյան միաբանության երեկելի անդամներից մեկի՝ Մինաս Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց» աշխատությունը, ուր առաջին անգամ գիտականորեն ներկայացված է քիմիական գիտության էությունը։

Գրքի 112-րդ էջում կարդում ենք. «Քիմիականություն է գիտություն, որ ուսուցանել է քակել զմարմինս, և անդրէն բաղադրել»։ Այսինքն՝ քիմիան գիտություն է, որը սովորեցնում է քակել, տարալուծել, քաջքայել մարմինները՝ վերստին այն ստանալու, սինթեզելու համար։ Մ. Բժշկյանի ապրած ժամանակներում քիմիան սահմանվում էր նման ձևով։ Բերենք այլ քիմիկոսների սահմանումները։ Ֆրանսիացի քիմիկոս Ն. Լեմերի (1645—1716). «Քիմիան

արվեստ է, որը սովորեցնում է, թե ինչպես բաժանել խառը մարմիններում՝
նրաժ տարբեր նյութերը» [7]: Ֆրանսիացի քիմիկոս Ա. Լավուազիե (1743—
1794)։ «Քիմիան, հետազոտելով բնության տարբեր մարմինները, նպատակ
ունի ճայքայել այդ մարմինները և ուսումնասիրել նրանց բաղադրության
մեջ մտնող առանձին նյութերը» [8]: Այս սահմանմանը շատ մոտ է Բժշկ-
յանի՝ քիմիայի մեկ ուրիշ սահմանումը։ «Որովհետև մարմինք բաղկացեալ
են յայլասեռ մասանց, քիմիականութուն քակել ի միմեանց դասսունս,
ուրոյն ուրոյն զննէ» [9]:

Մ. Բժշկյանը «Ճեմարան գիտելեաց»-ում բացի քիմիա բառից օգտա-
գործել է նաև քիմիական վերաբերմունք տերմինը, որն այսօրվա գիտական
գրականության մեջ համազոր է քիմիական ակտիվությանը: Հատկանշական
է, որ անցած դարի սկզբին, երբ դեռևս կային ալքիմիայով դբաղվողներ,
Մ. Բժշկյանը հստակորեն դանազանել է քիմիան ալքիմիայից. «նախնի քի-
միականք ալքիմիայք կոչիցեալք ընդունայն յուսով»:

19-րդ դարում տպագրված քիմիական գրականության մեջ առանձնա-
հատուկ ուշադրության է արժանի 1853-ին Կ. Պլստում լույս տեսած Հուլհան-
նես Վահանյանի «Սկզբունք քիմիական գիտութեան» գիրքը: Առաջին դիրքն
է սա մեզանում, որ ամբողջովին նվիրված է քիմիային:

19-րդ դարի տպագիր գրականության մեջ քիմիա բառը հանդիպում ենք
նաև Սերովբե Կարնեցու [10], Գալուստ Կոստանդյանի [11], Նդիշե Գաֆ-
սանճյանի [12], Մատթեոս Սաղաթելյանի [13], Մեորուր Աղաջրաղանի
[14], Բարսեղ Նուրիճանյանի [15], Միքայել Նալբանդյանի [16] և այլոց
սշխատություններում:

Հատկանշական է, որ քիմիա տերմինը որպիս բառարանային միավոր,
հոդվածի գլխաբառ, տակավին 18—19-րդ դարերում գործածել են Վենետիկ-
ի Մխիթարյան միաբանները իրենց բառարանագիտական աշխատություն-
ներում [17—19]:

19-րդ դարում հրատարակված երկվեզվյան բառարաններում նույնպե-
կան քիմիա, քիմիագործություն, քիմիական, քիմիարար բառեր [20, 21]:

Մի շարք հեղինակներ, սակայն քիմիա բառի փոխարեն կիրառել են
տարրաբանություն, բնալուծություն, ինչպես նաև տարրագիտություն բառե-
րը [22]: Այսպես, երևելի հանրագիտակ և մանկավարժ, Մխիթարյան միա-
բանության անդամ Մանվել Քաջունին Վենետիկում 1870-ին հրատարակած
քիմիային նվիրած իր հոսհատոր աշխատությունը վերնագրել է «Տարրաբա-
նություն»: Նդիշե Չազըճյանը [23] քիմիայի փոխարեն օգտագործել է բնա-
լուծություն բառը:

Մեր կարծիքով տարրաբանություն, բնալուծություն և տարրագիտություն
բառերը լրիվ չեն արտահայտում քիմիական գիտության ողջ էությունը:
Նման կարծիքներ շատ են արտահայտվել դեռևս անցյալ դարի վերջերին:
Այսպես, 1885 թվականին, Թիֆլիսի Մովսես Վարդանյանի տպարանում լույս
է տեսել «Բնալուծություն Բերնշտեյնի» գիրքը: Թարգմանիչ Սմբատ Մուշեղ-
յանը գրքի ներածականում գրել է. «Թող ներեն մեզ յարգելի ընթերցողնե-
րը, որ փոխանակ «բնալուծություն» բառի այսուհետև գործածելու ենք «Քի-
միա» բառը, առավել գործածական լինելու համար:

Ընդհուպ մինչև մեր դարի 20-ական թվականները Հայաստանում քի-
միային նվիրված ամբողջական մենագրություն չի տպագրվել: 1925 թվակա-

նիր, Երևանում ուսանողներով լույս է տեսել վաստակաշատ գիտնական և մշակութային գործիչ Վահագն Դեմիրճոլյանի (1875—1938) «Վալենտականությունը և ատոմների կառուցվածքը» 144 էջանոց, աղյուսակներով և 366 գծագրեր պարունակող աշխատությունը: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո այս գիրքը քիմիային նվիրված առաջին հիմնարար աշխատությունն է:

Վ. Դեմիրճոլյանի վերը նշված գրքի հրատարակումից հետո Հայաստանում քիմիային նվիրված տպվել են հարյուրավոր գրքեր՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Շատ ուշատ գրքեր թարգմանվել են անգլերենից, ռուսերենից, այլ լեզուներից: Հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ 1917 թվականից հրատարակվում է միայն քիմիային նվիրված «Հայկական քիմիական ամսագիրը», որի էջերում, ի ուղարկություն մեզ, արդեն հանդիպում ենք նաև հայ քիմիայի պատմությանը նվիրված հոդվածներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Возникновение и развитие химии с древнейших времен до XVII века. М., 1930, 194 с.
2. Вояков В. А., Вонский Е. В., Кузнецова Г. И.—Выдающиеся химики мира, М., 1991, 177 с.
3. Անադյան Հ. Հ.—Հայերեն արմատական բառարան, Երևան, 1979, հ. 4, էջ 579:
4. Սամսելի քահանայի Անկեղծ հավաքմանը ի դրոց սլաւոմագրաց. Վաղարշապատ, 1893, էջ 131:
5. Անադյան Հ. Հ.—Հայերեն արմատական բառարան, Երևան, 1979, հ. 4, էջ 411:
6. Гофман К.—Можно ли сделать золото?, М., 1987, с. 26.
7. Lescry N. — Cours de chimie, Paris, 1713.
8. Соловьев Ю.—Эволюция основных теоретических проблем химии. М., 1971, 65 с.
9. Իժնյան Մ.—Ճեմարան գիտելիաց, Վենետիկ, 1815, 112 էջ:
10. Սերոբյե Կարենցի—Մադիկ գիտութեան, Մոսկվա, 1819:
11. Կասադեղյան—Քիմիաբանութիւն համառոտ, Զմյուռնիա, 1858:
12. Գաֆառեղյան Ե.—Բովանդակություն գիտութեանց և արուեստից, Վիննա, 1861:
13. Սաղաթեղյան Մ.—Համառոտ բնական գիտություն, Վիննա, 1842:
14. Աղաբաղյան Մ.—Համառոտ արուեստարանություն և նորանոր հնարք, Վենետիկ, 1830:
15. Նալբանդյան Բ.—Փորձառական բնագիտություն կամ ֆիզիկա, համառոտ օղերուկաբանութեամբ և քիմիայով, Երևան, 1856:
16. Նալբանդյան Մ.—«Հյուսիսափայլ» ամսագիր, Մոսկվա, 1859, № 8:
17. Ալեքիֆյան Գ., Սյուրմելյան Խ., Ալգեբյան Մ.—Նոր բաղիրք Հայկազնան լեզուի, Վենետիկ, 1837, էջ 1006:
18. Քաղնիկ Մ.—Բաղիրք արուեստից և գիտութեան, հ. 1—3, Վենետիկ, 1891—1893:
19. Երեմյան Ս.—Պատկերազարդ բաղիրք գործնական գիտութեանց, Վենետիկ, 1900:
20. Նալբաբաղյան Ա.—Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ, հ. 2, Մոսկով, 1838, էջ 494:
21. Կամիառա Ա. Ոսկեան—Առձեռն բառագիրք հայերէն—գաղղիերէն, Կ. Պոլիս, 1893, էջ 875:
22. Փաշայան Ա.—19-րդ դարի քիմիան հայ բնաբանների աշխատություններում, Երևան, 1992, էջ 13:
23. Չափեղյան Ե.—Գործնական պրոպագանդություն, Վիննա, 1877, էջ 2:

Ա. Ա. ՓԱՇԱՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր Բարձրագույն որակավորման հանձնաժողովի բնական գիտությունների բաժնի գլխավոր մասնագետ